ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՎԱՀԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, կուսակցությունը, հենվելով գյուղատնտեսության մեջ հաղթանակած սոցիալիստական արտադրահարաբերությունների առավելությունների և դրանց ընձեռած հնարավորությունների վրա, կարճ ժամկետում տնտեսության այդ ճյուղը վերակառուցեց պատերազմի պայմաններին համապատասխան։ Առաջնորդվելով կուսակցության և կառավարության որոշումներով, Հայաստանի կոմկուսը մոբիլիզացրեց գյուղի աշխատավորությանը՝ հաղթահարելու պատերազմի հետևանքով ծագած դժվարությունները և հենց սկզբից խնդիր դրեց. 1. ուժերի առավելագույն լարմամբ և հնարավորությունների արդյունավետ օգտագործմամբ դադարել հաց ներմուծող հանրապետություն լինելուց և բնակչությանն ապահովել սեփական արտադրության հացով, 2. գյուղում բանվորական ուժի պակասի պայմաններում չկրճատել խաղողի, պտղատու այգիների և մյուս կուլտուրաների տարածությունները, 3. պահպանել հանրային անասնաբուծությունը և նրա գլխաքանակի հետագա աճը՝ ամեն կերպ օգտագործելով Հայաստանում եղած նպաստավոր պայմանները, 4. ամրապնդել կոլտնտեսությունները, ժամանակին կատարել կուսակցության առաջադրանքները[1]։

Գյուղատնտեսության բնագավառում կուսակցական ղեկավարությունն ուժեղացնելու համար Համկ(բ)կ Կենտկոմի 1941 թ. նոյեմբերի 17-ի որոշմամբ քաղվարչություններ ստեղծվեցին գյուղատնտեսության և սննդարդյունաբերության ժողկոմատներում, քաղբաժիններ՝ ՄՏԿ-ներում ու սովխոզներում։ Համկ(բ)կ Կենտկոմի որոշման մեջ հստակորեն տրված էին գյուղատնտեսության բնագավառում կուսակցական նոր ղեկավար մարմինների ֆունկցիաները, դրանց առջև ծառացած խնդիրները և լուծման ուղիները։ «Քաղբաժնի պետը,— նշված էր որոշման մեջ,— իրականացնում է լիակատար ղեկավարություն ՄՏԿ-ի կուսակցական և կոմերիտական կազմակերպություններում, պատասխանատու է ՄՏԿ-ում և սովխոզում կուսակցական-քաղաքական աշխատանքի համար»[2]։

Կարճ ժամկետում հանրապետության նորաստեղծ կուսակցական մարմիններում առաջ քաշվեցին փորձված, անհրաժեշտ քաղաքական և գործնական հատկանիշներով օժտված կադրեր։ Քաղբաժիններ ստեղծվեցին 37 ՄՏԿ-ներում և 13 խոշոր սովխոզներում։ Քաղվարչություններն ու քաղբաժինները վիթխարի աշխատանք ծավալեցին գյուղում՝ բոլոր ուժերը մոբիլիզացնելով կուսակցության առաջադրանքները կատարելու համար։

---

1 Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 33, գ. 2, թ. 3։

2 Նույն տեղում, ց. 30, գ. 31, թ. 11։

Պատերազմի հետևանքով առաջացած դժվարություններից մեկը աշխատուժի պրոբլեմն էր, որի լուծման աղբյուր ծառայեցին. ա) մինչև պատերազմը չաշխատող կանանց զանգվածային ներգրավումը կոլտնտեսային արտադրության մեջ, բ) մնծահասակության և այլ պատճառներով աշխատանքը թողած կոլտնտեսականների վերադարձն արտադրություն, գ) դպրոցական արձակուրդների շրջանում 12—16 տարեկան դեռահասների ներգրավումը աշխատանքներում, դ) քաղաքային աշխատունակ բնակչության մոբիլիզացումը կոլտնտեսային աշխատանքներին։

Հանրապետությունից 1941—1945 թթ. ռազմաճակատ մեկնեցին մոտ 100 հազ. կոլտնտեսականներ[3], որի հետևանքով կոլտնտեսություններում աշխատանքի հիմնական ծանրությունն ընկավ կանանց և երիտասարդների ուսերին։ «Այժմ վճռական ուժը կոլտնտեսություններում,— ընդգծվել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի 14-րդ պլենումում (1943, մայիս),— հանդիսանում են կանայք և երիտասարդությունը»[4]։

Կուսակցության հերոսական աշխատանքի պտուղները երևացին պատերազմի հենց առաջին տարում։ 1941 թ. երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական աշխատանքներն ավելի կազմակերպված անցան, քան առաջինում։ Այսպես, օրինակ, «գյուղատնտեսական աշխատանքին կանանց մասսայական մասնակցությամբ 20 օր ավելի շուտ ավարտվեց բերքահավաքը, քան նախորդ տարում»[5]։

Աշխատունակ կանանց գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավելու համար գյուղերում բացվեցին մանկամսուրներ, մանկապարտեզներ և մանկական հրապարակներ։ 1943 թ. գյուղական վայրերում գործող 2796 նախադպրոցական հիմնարկներում ընդգրկված էր 91 հազ. երեխա[6]։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 15-րդ պլենումում (1943, հուլիս) խնդիր դրվեց գյուղական վայրերի նախադպրոցական հիմնարկներում երեխաներին խնամել նաև գիշերները, որպեսզի կոլտնտեսություններում մայրերի աշխատանքը «արշալույսից-արշալույս» ապահովվի[7]։

Պատերազմի տարիներին դնալով աճեց կանանց տեսակարար կշիռը կոլտնտեսային աշխատանքներում։ Այսպես, եթե հանրապետությունում 1940 թ. կանայք կազմում էին կոլտնտեսային արտադրության մեջ աշխատած կոլտնտեսականների 46%-ը[8] և վաստակել էին աշխօրերի 30%-ը[9], ապա 1942 թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմեցին 56,11[10] և 49[11], իսկ 1943 թ.՝ 68,3 և 80%[12]։ Գյուղատնտեսության ղեկավար աշխատանքում

---

3 Ք. Գ. Գրիգորյան, Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին, Երևան, 1979, էջ 109։

4 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 32, գ. 245, թ. 10։

5 Նույն տեղում, ց. 30, գ. 18, թ. 23։

6 Նույն տեղում, ց. 33, գ. 7, թ. 30։

7 Նույն տեղում։

8 «Сельское хозяйство Армянской ССР», Ереван, 1961, с. 48.

9 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ), ֆ. 163, ց. 21, գ. 1145, թ. 2։

10 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 33, գ. 2, թ. 14։

11 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 163, ց. 21, գ. 1145, թ. 2։

12 Ք. Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 29։

ևս կանանց դերը աճեց։ Նրանցից շատերն առաջ քաշվեցին որպես կոլտնտեսությունների նախագահներ, բրիգադիրներ, ֆերմաների վարիչներ, հաշվապահներ, օղակավարներ և այլն։

Գյուղատնտեսությունն աշխատուժով ապահովելու համար կարևոր նշանակություն ունեցավ ՍՍՀՄ Ժողկոմսովետի և Համկ(բ)Կ Կենտկոմի 1942 թ. ապրիլի 13-ի «Քաղաքների և գյուղական վայրերի աշխատունակ բնակչությանը կոլտնտեսություններում, սովխոզներում և ՄՏԿ-ներում աշխատանքի մոբիլիզացնելու կարգի մասին» որոշումը, որի համաձայն հանրապետության կուսակցական և սովետական մարմինները 1942 թ. գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու համար մոբիլիզացրին 10400 մարդ, այդ թվում 500-ը՝ միայն Երևանից[13]։ Նույն որոշմամբ գյուղատնտեսության մեջ աշխատանքի մոբիլիզացվածների քանակը հաջորդ տարում ավելի քան կրկնապատկվեց։ 1943 թ. 2—3 ամսով աշխատանքի մոբիլիզացվեց 20954 մարդ, այդ թվում քաղաքներից՝ 2800 մարդ (միայն Երևանից՝ 600)։ Այդ միջոցառումը օգնեց կոլտնտեսություններին և սովխոզներին՝ ժամանակին ավարտելու 1943 թ. բերքահավաքը[14]։ Ամառային արձակուրդների ժամանակ կոլտնտեսություններում աշխատանքի ընդգրկվեցին նաև աշակերտները։

Կոլտնտեսություններում աշխատավոր ձեռքի քանակական ապահովումը հարցի թեև կարևոր, բայց մի կողմն էր միայն։ Հարկավոր էր կազմակերպել կոլտնտեսային արտադրության մեջ ընդգրկված հազարավոր նոր մարդկանց որակավորման գործը։ Դա իրականացնում էին ՄՏԿ-ները և շրջսովետների գործկոմների հողբաժինները՝ ուշ աշնան և ձմռան ամիսներին։ Մասսայական որակավորման կարճատև դասընթացներում (բրիգադիրների, օղակավարների, կթվորների, անասնապահների, ծխախոտագործների, խաղողագործների և մեղվապահների) դասավանդում էին կուսակցական և սովետական շրջանային ղեկավար աշխատողները, հողժողկոմատից, գիտական և ուսումնական հաստատություններից գործուղված մասնագետները։

Պատերազմի նախօրյակին հանրապետության ՄՏԿ-ներում աշխատում էին 2100 տրակտորիստներ[15]։ Միայն պատերազմի առաջին օրերին բանակ զորակոչվեցին նրանցից 1200-ը[16]։ Նկատի ունենալով պատերազմի վտանգը, դեռ 1939—1940 թթ. երկրում սկսվել էր տրակտորիստների պատրաստումը, իսկ երբ տղամարդ տրակտորիստների մեծ մասը զորակոչվեց, Հկ(բ)Կ Կենտկոմը պատերազմի առաջին շաբաթվա վերջին օրը՝ հունիսի 29-ին, ընդունեց «ՄՏԿ-ները մեխանիզատորական կադրերով ապահովելու մասին» որոշումը։ Դա պատերազմի տարիներին գյուղատնտեսական կադրերի պատրաստման և որակավորման մասին Հկ(բ)Կ Կենտկոմի առաջին որոշումն էր։ Դրանով համապատասխան մարմիններից պահանջվեց «10 օրվա ընթացքում ՄՏԿ-ները տրակտորների ղեկին վերադարձնել նախկին կոմբայնավարներին, տրակտորիստներին և ՄՏԿ-ներին կից դասընթացները սովորած կին-տրակտո-

---

13 ՀՍՍՀ ՀԱՍԾՊԿԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1108, թ. 1։

14 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 32, գ. 49, թ. 279։

15 «Социалистическое строительство Армянской ССР (1920—1940)», Ереван, 1940, с. 58.

16 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 30, գ. 18, թ. 217։

ոիստուհիներին՝ թվով 708 մարդ»[17]։ Նույն որոշմամբ նախատեսվում էր ՄՏԿ-ներում և մեխանիզատորական դպրոցներում կարճատև դասընթացների միջոցով պատրաստել ևս 860 մեխանիզատորներ։ Միայն 1941 թ. նոյեմբերի 1-ից մինչև 1942 թ. փետրվարի 1-ը պատրաստվեցին 1450 մեխանիզատորներ[18]։

Գյուղատնտեսական կադրերի պատրաստման գործում մեծ աշխատանք կատարեցին նաև միջշրջանային կոլտնտեսային դպրոցները, որոնց ամրապնդման նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1941 թ. սեպտեմբերի 8-ի որոշումով կատարվեց դրանց խոշորացում (18 դպրոցներ միավորվեցին 8-ի մեջ)[19]։ 1944 թ. բացվեց գյուղատնտեսական մեխանիզատորական արհեստագործական դպրոցը, որում ընդգրկվեցին 200 պատանիներ ու աղջիկներ։ Պատերազմի տարիներին պատրաստվեցին մասսայական որակավորում ունեցող 58 հազ. կադրեր, 6710 մեխանիզատորներ, բուհերը և տեխնիկումները տվեցին գյուղատնտեսության 1500 մասնագետներ[20]։

Պատերազմի տարիներին մեծ փոփոխություններ կատարվեցին գյուղատնտեսության ղեկավար կադրերի շրջանում, իհարկե, մեծ մասի բանակ մեկնելու պատճառով։ Մինչև 1944 թ. հունիսը փոխվեցին 37 ՄՏԿ-ների դիրեկտորներից 20-ը, 36 շրջհողբաժվարներից՝ 18-ը (13-ը մեկնել էին բանակ), 1035 կոլտնտեսությունների նախագահներից՝ 700-ը[21], 3910 բրիգադիրներից՝ 3148-ը, 1500 ֆերմաների վարիչներից՝ 1225-ը[22]։

Կոլտնտեսություններում կարգապահությունն ամրապնդելու, արտելի կանոնադրությունը պաշտպանելու և կուսակցական ղեկավարությունն ուժեղացնելու գործում կարևոր դեր խաղացին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ 1942—1943 թթ. այդ ուղղությամբ ընդունած որոշումները։ ՀԿ((բ)Կ Կենտկոմը ժամանակին քննարկելով դրանք, կոնկրետ միջոցառումներ ձեռնարկեց գյուղատնտեսության բնագավառում կադրային քաղաքականության մեջ տեղ գտած սխալները վերացնելու համար։ Կոլտնտեսություններին կազմակերպական օգնություն ցույց տալու համար 1943 թ. գյուղ գործուղվեցին 227 ղեկավար աշխատողներ, որոնք տեղերում աշխատեցին գարնանացանից մինչև բերքահավաքի ու աշնանացանի ավարտը[23]։ Բացի այդ, գյուղ աշխատանքի ուղարկվեցին գյուղատնտեսության 178 մասնագետներ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը կոլտնտեսային ղեկավար կադրերի ընտրության հարցում սխալներ բացահայտեց Զանգիբասարի (Մասիս) ու Ազիզբեկովի շրջաններում և ուղղեց դրանք[24]։ Նման փաստերից խուսափելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմը կու-

---

17 Նույն տեղում, գ. 28, թ. 96։

18 Նույն տեղում, գ. 33, թ. 4։

19 Նույն տեղում։

20 «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960», Երևան, 1960, էջ 260։

21 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 33, գ. 7, թ. 46։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, ց. 32, գ. 48, թ. 278։

24 Նույն տեղում, ց. 31, գ. 15, թ. 101։

սակցության շրջկոմներին հանձնարարեց կոլտնտեսությունների նախագահների ազատման կամ նշանակման հարցերը լուծել միայն Կենտկոմի գյուղբաժնի և հողժողկոմատի հետ միասին։ Այս պահանջն ավելի կտրուկ դրվեց նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի 18-րդ պլենումում (1944, հունիս), որտեղ կադրերի հոսունության հարցում խիստ քննադատվեցին գյուղական մի շարք շրջկոմներ։

Հայրենական մեծ պատերազմը ծանր քննություն էր մեր հանրապետության գյուղատնտեսական կադրերի համար։ Այն ստուգեց կուսակցության կադրային քաղաքականությունը։ Պատերազմի տարիներին առաջ քաշված կադրերը փայլուն բռնեցին այդ քննությունը և հաջողությամբ լուծեցին իրենց առջև դրված բարդ ու դժվարին խնդիրները։

Որպեսզի լրիվ ապահովվեր անչափահասների մասնակցությունը կոլտնտեսության աշխատանքներին, 1942 թ. փետրվարին սահմանվեց աշխօրերի պարտադիր մինիմում (50 աշխօր) 12—16 տարեկան երեխաների համար։ ՍՍՀՄ Ժողկոմսովետի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1942 թ. ապրիլի 17-ի որոշմամբ բարձրացվեց կոլտնտեսականների աշխօրերի պարտադիր մինիմումը։ ՀՍՍՀ Ժողկոմսովետն ու ՀԿ(բ)Կ Կենտկոմն այդ որոշմամբ սահմանեցին կոլտնտեսականի աշխօրերի պարտադիր մինիմում բամբակացան շրջանների համար՝ 150, իսկ մյուսների՝ 120 աշխօր։ Պատերազմի տարիներին հանրապետությունում, չնայած կոլտնտեսականների աշխատունակ կազմի փոփոխությանը, աճեց կոլտնտեսականների աշխօրերի միջին քանակը։ Այսպես, եթե հանրապետությունում միջին հաշվով մեկ կոլտնտեսականը 1940 թ. վաստակել էր 151 աշխօր, ապա 1941 թ.՝ 156, իսկ 1942 թ.՝ 167[25]։

Պատերազմի տարիներին նվազեցին հանրապետության գյուղատնտեսությանը սպասարկող տրակտորների և ավտոմեքենաների քանակը, ինչպես մեկ տրակտորի, այնպես էլ տրակտորային ամբողջ համակազմի համար նախատեսված պլանային առաջադրանքները և կատարած աշխատանքները (աղյուսակ № 1)։

Աղյուսակ № 1

ՀՍՍՀ գյուղատնտեսության տրակտորային համակազմը և կատարած աշխատանքները։ Կոլտնտեսություններին պատկանող ավտոմեքենաների քանակն ըստ տարիների (1940—1945 թթ.)[26]

տարիները	տրակտորների քանակը (15 ուժանոցի վերածած)	պլան՝ փափուկ վարի հաշվով (հազ. հա)	կատարված (հազ. հա)	կատարման տոկոսը	մեկ տրակտորի պլանը առանց կալման		կոլտնտեսություններին պատկանող ավտոմեքենաների քանակը
					պլան	կատարողական	
1940	1953	590	529,4	89,7	359	322	592
1941	1654,2	500	428,4	85,7	302	259	230
1942	1273,3	400	350,1	87,5	255	222	128
1943	1544,3	350	325,7	93,1	229	213	75
1944	1457,6	325	330,6	101,7	275	351	99
1945	1391,9	325	370	113,8	244	266	119

25 Նույն տեղում, ց. 33, գ. 2, թ. 14։

26 Աղյուսակը կազմված է ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 123, ց. 58, գ. 583, թ. 61, 69, 70, 71, ֆ. 163, ց. 21, գ. 2 և Մլի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 32, գ. 65, թ. 132 նյութերի հիման վրա։

Տրակտորների և ավտոմեքենաների քանակը նվազեց՝ նրա որոշ մասը բանակին հատկացվելու, խոտանվելու պատճառով։ Եթե հաշվի առնենք տրակտորների ցածր արտադրողականությունը (աղյուսակ № 1), պահեստամասերի և վառելիքի սակավության հետևանքով առաջացած դժվարությունը (1942 թ. հնարավոր եղավ աշխատեցնել միայն 842 տրակտոր[27] և 265 կոմբայնից 200-ը)[28], ապա պարզ կդառնա, թե հողագործության մեջ ինչ չափով բարձրացավ ֆիզիկական աշխատանքի բաժինը և քաշող ուժի դերը։ 1943 թ. գարնանացանի 60%-ը կատարվեց քաշող ուժի միջոցով[29]։

Գյուղատնտեսական արտադրության մեքենայական համակարգն արդյունավետ օգտագործելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1943 թ. փետրվարի 11-ի որոշմամբ գյուղատնտեսական մեքենաների պահեստամասեր սկսեցին արտադրել Երևանի մոտորանորոգման, Ալավերդու պղնձաձուլական գործարանները, Հոկտեմբերյանի մեքենատրակտորային արհեստանոցը (ՄՏԱ), «Սևանշինի», «Արթիկտուֆի», «Բազմարդի» և Քանաքեռգէսի արհեստանոցները[30], իսկ 1944 թ. ստեղծվեցին ևս 6 նոր շրջանային ՄՏԱ-ներ։

Գյուղտեխնիկայի պակասը լրացվեց քաշող ուժի արդյունավետ օգտագործմամբ։ Հանրապետությունում այդ տարիներին հաշվվում էր ավելի քան 100 հազ. եզ (տե՛ս աղյուսակ № 2)։ Եզները կազմում էին կոլտնտեսությունների խոշոր եղջերավոր անասունների 1/3-ը։ Սակայն դրանք, որպես քաշող ուժ, դարձյալ չէին բավարարում գյուղատնտեսության պահանջները, և ՀԿ(բ)Կ Կենտկոմը դեռ 1941 թ. նոյեմբերի 8-ին կուսակցության գյուղական շրջկոմներին հանձնարարել էր ցրտահերկը ժամանակին կատարելու համար որպես քաշող ուժ օգտագործել «ստերջ կովերն ու երինջները»[31]։

1944 թ. դրությամբ ձիերի ավելի քան 50%-ը տրվել էր բանակին։ Մնացել էին մրայն խոտանված և բազմանալու անընդունակ ձիեր[32]։

Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացման համար գլխավորը ոռոգման պրոբլեմն էր, սակայն «պատերազմը սկսվելուց հետո ոռոգման շինարարական աշխատանքները կրճատվեցին, իսկ ներքին Զանգվի, Նորքի, Բալինի ջրանցքների և Քանաքեռգէսի կոլեկտորի շինարարությունը կոնսերվացվեց»[33]։

Սովետական ժողովրդի սխրանքով ռազմաճակատում ձեռք բերված արմատական բեկումից հետո հանրապետությունում տեղական նախաձեռնությամբ նկատելիորեն աշխուժացան իռիգացիոն-շինարարական աշխատանքները։ Երևանի աշխատավորության նախաձեռնությամբ 1943 թ. հոկտեմբերից սկսվեց Նորքի ջրանցքի շինարարությունը։ Շինարարությունում օրական աշխատում էին 2000, իսկ կիրակի օրերին՝ 4000 մարդ։ Տքնաջան աշխատանքի շնորհիվ ջրանցքի շինարարությունը ժամկետից շուտ ավարտվեց[34]։

---

27 ՀՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 129, ց. 58, գ. 399, թ. 2։
28 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 32, գ. 10, թ. 135։
29 Նույն տեղում, գ. 2, թ. 25։
30 Նույն տեղում, գ. 13, թ. 73։
31 Նույն տեղում, ց. 30, գ. 33, թ. 2։
32 Նույն տեղում, ց. 33, գ. 2, թ. 10։
33 Նույն տեղում, ց. 32, գ. 2, թ. 12։
34 Նույն տեղում, գ. 9, թ. 14։

Այդ ժամանակ սկսվեց Ադիամանի (Գետաշեն, Մարտունու շրջան) ջրանցքի շինարարությունը։ Այն ավարտվեց 1944 թ.՝ ոռոդելի դարձնելով 1300 հա տարածություն։

Նկատի ունենալով եղած հնարավորությունները և աշխատավորության նախաձեռնությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և ՀՍՍՀ Ժողկոմսովետի միջնորդությամբ ՍՍՀՄ Ժողկոմսովետը 1943 թ. նոյեմբերի 3-ին ընդունեց «Հայկական ՍՍՀ-ում իռիգացիոն-շինարարական աշխատանքները վերսկսելու մասին» որոշումը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 16-րդ պլենումը (1943, նոյեմբեր) քննարկեց «Հայկական ՍՍՀ-ում իռիգացիոն շինարարության վերսկսմամբ և խաղողագործության ու պտղաբուծության զարգացմամբ ՍՍՀՄ ԺԿՍ-ի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1940 թ. սեպտեմբերի 6-ի որոշման կենսագործման մասին» հարցը և ընդունեց հանրապետությունում ջրաշինարարության հետագա զարգացման համար կարևոր որոշում։ Փաստորեն այդ որոշմամբ հանրապետության գյուղատնտեսության մեջ պատերազմի երկրորդ կեսից սկսվեցին վերականգնման աշխատանքները։

Երկրի արևմտյան շրջանների օկուպացման հետևանքով անասունների խոշոր կորուստը կուսակցության առջև մեծ սրությամբ խնդիր դրեց թիկունքային շրջաններում պահպանել և զարգացնել հանրային հոտը։ Հանրապետությունում թեև պատերազմի հետևանքով ստեղծվել էին լուրջ դժվարություններ, բայց պայքարն այդ ուղղությամբ ծավալվեց չթուլացող տեմպերով։ Այդ են վկայում աղյուսակ № 2-ի տվյալները։

Աղյուսակ № 2

ՀՍՍՀ անասնաբուծության հիմնական ցուցանիշները 1940—1945 թթ. (հազարներով)[35]

տարեթվեր	հանրային սեկտոր						անասունների գլխաքանակը տնտեսության բոլոր կատեգորիաներում		
	խոշոր եղջերավոր անասուններ		ոչխարներ և այծեր	խոզեր	ձիեր	թռչուններ	անասուններ	1940	1945
	ընդամենը	այդ թվում՝ կովեր							
1940	287,8	47	644,0	29,8	38,4	90,1	խոշոր եղջ. անասուններ	598,2	538,0
1941	292,3	54,5	681,2	32,3	26,0	101,0	այդ թվում՝		
1942	269,5	47,8	640,6	30,8	—	93,8	եզներ	120,3	103,4
1943	295,3	47,6	732,9	30,6	17,3	98,2	ոչխարներ և այծեր	1221,3	1031,0
1944	294,6	45,8	726,7	24,8	17,4	102,8	ձիեր	58,8	24
1945	296,4	48,6	721,8	26,1	19	87,7	խոզեր	58,3	45,7

Աղյուսակից երևում է, որ 1943 թ. սկսած հանրային անասնաբուծության մեջ նկատվում է բարելավման միտում։ Այսպես, 1940 թ. համեմատությամբ

[35] ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 120, ց. 5, գ. 227, թ. 12; Ю. В. Арутюнян, Советское крестьянство в годы Великой Отечественной войны, М., 1970, с. 410.

1945 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել է 3, իսկ ոչխարներինը և այծերինը՝ 12%-ով։ Այսպիսով, կոլտնտեսային կարգը հնարավորություն տվեց ոչ միայն պահպանել անասնապահության նշված ճյուղերի նախապատերազմյան մակարդակը, այլև զարգացնել այն։ Հանրային անասնապահության ցուցանիշները քննելիս չպետք է անտեսել այն թերությունները, որոնք նկատվեցին պատերազմի շրջանում։ Կոլտնտեսություններում անասունների աճը հիմնականում ապահովվեց գնումների միջոցով։ 1942 թ. վերջերից մինչև 1943 թ. մարտը կոլտնտեսականներից և ծառայողներից գնվել են խոշոր եղջերավոր՝ 65139, մանր եղջերավոր՝ 109134 գլուխ անասուններ[36]։ Պատերազմի տարիներին զգալիորեն պակասեց կոլտնտեսականների և ծառայողների անասունների գլխաքանակը։ Կովերի չափից ավելի ստերջության հետևանքով խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի աճը սեփական հոտի վերարտադրության միջոցով չափազանց դանդաղ էր ընթանում, բայց 1943 թ. սկսած «մայրական կազմի սերմնավորման լավ կազմակերպմամբ վերացվեց այդ թերությունը»[37]։

Հանրապետության կոլտնտեսային գյուղի աշխատավորության հերոսական աշխատանքով հաջողվեց հաղթահարել պատերազմի առաջին շրջանում ստեղծված դժվարությունները, կանխել գյուղատնտեսության մեջ սկսված նվազման պրոցեսը, իսկ 1943 թ. սկսած իշխող դարձավ բարելավման տենդենցը։ Այդ են վկայում աղյուսակ № 3-ի տվյալները։

Աղյուսակ № 3

ՀՍՍՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը։ Հացահատիկային կուլտուրաների ցանքը և բերքահավաքը 1940—1945 թթ.[38]

տարիները	համախառն արտադրանք (մլն ռ.)	1940 թ. համեմատ. (տոկոս)	համախառն արտադրանքն ըստ ճյուղերի (մլն ռ.)		հացահատիկային կուլտուրաներ		
			բուսաբուծ.	անասնաբուծ.	ցանվել է (հազ. հա)	հնձվել է (հազ. հա)	հավաքվել է (հազ. ց)
1940	102,4	100	66,9	35,5	340	—	2228
1941	96,2	94,5	63,7	33,1	—	332,9	2293
1942	93,2	91	69,4	23,8	332,6	320,9	1575,2
1943	102,6	100,1	78,7	23,9	358,6	329,5	1956,4
1944	103,8	101,3	78,9	24,9	356,6	344,8	2127,2
1945	104,3	101,8	76,5	27,8	358,1	335,7	2061

Հանրապետության գյուղի աշխատավորները պատերազմի բոլոր տարիներին պատվով կատարեցին կուսակցության առաջադրանքները, լուծեցին բնակչությանը պարենով ապահովելու հարցը և պլանից բացի երկրի պաշտպանության տարբեր ֆոնդերին լրացուցիչ տվեցին մեծ քանակությամբ գյու-

36 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 32, գ. 1, թ. 8։

37 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 123, ց. 5, գ. 1112, թ. 18։

38 Աղյուսակը կազմված է հետևյալ նյութերի և աշխատությունների հիման վրա՝ ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 130, ց. 5, գ. 62, թ. 13, 22, Գ. Գ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 61, Ю. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 414, 416, 418, 422, «Сельское хозяйство Армянской ССР», Ереван, 1961, с. 15; «Народное хозяйство Армянской ССР», Ереван, 1977, с. 62, 76.

գատնտեսական մթերքներ։ Այսպես, Կարմիր բանակի ֆոնդին 1942 թ. տրվել է 130 հազ. փութ հաց, 419 գ միս. 1943 թ. դիմաց որպես ավանս տրվել է 5 հազ. տ միս (7525 գլուխ խոշոր և 80 հազ. մանր եղջերավոր անասուններ), 101,6 տ պանիր, 101,7 տ բուրդ[39]։ Պլանային առաջադրանքները կատարելուց հետո միայն 1943 թ. կոլտնտեսությունները երկրի պաշտպանության ֆոնդին հատկացրին 130 հազ. փութ հաց, մեծ քանակությամբ միս և գյուղատնտեսական այլ մթերքներ, իսկ 1944 թ. Կարմիր բանակի ֆոնդին 200 հազ. փութ հաց տալուց բացի, խոշոր միջոցներ հատկացրին Լենինգրադի, Ստալինգրադի, Օդեսայի և ազատագրված այլ շրջանների ֆոնդին[40]։ 1943 թ. կոլտնտեսությունները պետությանը հանձնեցին 300 հազ. փութ հաց ավելի, քան 1942 թ.։ Պլանից դուրս 1944 թ. պետությանը հանձնվեց 231 հազ., իսկ 1945 թ.՝ 60 հազ. փութ հաց։ 1943 թ. 7 հազ. գ միս ավել հանձնվեց, քան 1941 թ., իսկ 1945 թ.՝ 12 հազ.[41]։

Պետական պլանների, ՄՏԿ-ներին տրվող բնավարձի, սերմացուի, պաշտպանության և այլ ֆոնդերի ապահովումից հետո մնացած բերքը բաշխվում էր կոլտնտեսականներին՝ ըստ աշխօրերի։ Հանրապետության կոլտնտեսությունների մեծ մասում կոլտնտեսականներին տրված բերքն ապահովել է նրանց կարիքները նվազագույն չափով։ Այսպես, ըստ բաժանված բերքի կոլտնտեսային գյուղացիության յուրաքանչյուր շնչին հանրապետությունում 1942 թ. օրական միջին հաշվով հասել է 220, իսկ 1943 թ՝ 350 գ հաց[42]։ Ճիշտ է, առանձին կոլտնտեսություններում բաժանվել է ավելի բարձր բերք, և կոլտնտեսականները կարող էին ավելցուկը շուկա հանել, բայց ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1943 թ. սեպտեմբերի 20-ին որոշել էր «արգելել Հայկական ՍՍՀ կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և մենատնտես գյուղացիներին հացի, ալյուրի, թխած հացի առք ու վաճառը՝ ընդհուպ մինչև նրանց կողմից պետությանը հանձնվող հացի պլանի կատարումը»[43]։ Հանրապետությունում պետական պլանները կատարելուց հետո միայն՝ նույն թվականի նոյեմբերի 6-ին, ՀԿ(բ)Կ Կենտկոմը որոշեց «...թույլատրել հանրապետության կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին և մենատնտես գյուղացիներին՝ անարգել կերպով վաճառելու իրենց հացը (հացահատիկ, ալյուր, թխած հաց»)[44]։

Հացահատիկի ցանքատարածությունների ավելացմամբ և հողի ինտենսիվ օգտագործմամբ ու լարված աշխատանքով հանրապետության կոլտնտեսային գյուղացիությունը հասավ բնակչության նվազագույն կարիքների բավարարմանը։ Պատերազմի տարիներին 20 հազ. հա-ով ավելացավ հացահատիկի ցանքատարածությունը, 16 հազ. հա-ով աճեց ջրովի հողատարածությունը[45]։

---

39 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 32, գ. 2, թ. 8։

40 «Советская Армения в годы Великой Отечественной войны», Ереван, 1975, с. 313.

41 А. Н. Мнацаканян, Компартия Армении—организатор всенародной помощи фронту в годы Великой Отечественной войны (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ., 1965, № 5, էջ 19)։

42 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 33, գ. 2, թ. 14, ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 161, ց. 25, գ. 1145, թ. 1—2։

43 Նույն տեղում, ց. 32, գ. 25, թ. 70։

44 Նույն տեղում, գ. 27, թ. 55։

45 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 130, ց. 5, գ. 62, թ. 2։

1944 թ. փետրվարի 29-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի 17-րդ պլենումը քննարկեց «Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման և Հայաստանի գյուղատնտեսության վերաբերյալ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1944 թ. փետրվարի 4-ի որոշման կենսագործման միջոցառումների մասին» հարցը։ Պլենումում զեկուցումով հանդես եկած ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանն ընդգծեց, որ «պատերազմի տարիներին Հայաստանի գյուղատնտեսությունը անշեղորեն զարգացել է» և ապա նշեց, որ հանրապետությունում բոլոր պլանները կատարվել են «գյուղատնտեսության համախառն արտադրանքի ավելացման հիման վրա և ոչ թե անձնական սպառման կրճատման հաշվին»[46]։ Թեև սույն ընդհանրացումը չէր բխում գյուղատնտեսության իրական վիճակից, բայց ելակետային նշանակություն ունեցավ սովետահայ պատմագիտության համար։ Եվ սովետահայ պատմագիտության մեջ ընդունված այն տեսակետը, որ Հայաստանի գյուղատնտեսությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին ոչ միայն անկում չունեցավ, այլ ընդհակառակը՝ անշեղորեն զարգացավ և պատերազմի վերջին հասավ խոշոր նվաճումների, շարունակում է պաշտպանվել մինչև այժմ[47]։

Մեծ հաղթանակից հետո կուսակցությունը, բռնելով ժողովրդական տնտեսության վերականգնման կուրսը, տվեց նաև պատերազմի տարիների երկրի գյուղատնտեսության վիճակի գնահատականը։ «Գերմանական ագրեսիոնիստների կողմից մեզ փաթաթված պատերազմը,— ասված է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի 1947 թ. փետրվարյան պլենումում՝ երկրի գյուղատնտեսության հետագա զարգացման մասին ընդունված որոշումում,— ժամանակավորապես կասեցրեց մեր սոցիալիստական գյուղատնտեսության զարգացումը»[48]։

ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ Լ. Ի. Բրեժնևն իր «Խոպան» հուշագրում, անդրադառնալով պատերազմի հետևանքով երկրի գյուղատնտեսության մեջ ստեղծված վիճակին, գրում է. «Ինչ վերաբերում է օկուպացման ենթարկված շրջաններին, ապա այնտեղ էլ ՄՏԿ-ների, սովխոզների, կոլտնտեսությունների նյութատեխնիկական բազան ամենուրեք հիմնովին խարխլված էր։ Տեխնիկան երկար տարիներ աշխատելու հետևանքով մաշվել էր, դաշտերն անխնամ էին մնացել։ Եվ ամենասոսկալին այն էր, որ ամենուրեք չէին բավականացնում մարդիկ՝ միլիոնավոր տրակտորիստներ, կոմբայնավարներ, ինժեներներ, գյուղատնտեսներ զոհվել էին պատերազմում»[49]։ Սույն գնահատականը լիովին վերաբերում է նաև Սովետական Հայաստանի այդ շրջանի գյուղատնտեսությանը։

Հայրենական մեծ պատերազմի շրջանի սովետական գյուղատնտեսության հայտնի մասնագետ Յու. Հարությունյանը փաստական նյութի բազմակողմանի ու խոր վերլուծմամբ, հերքելով պատերազմի տարիներին «գյուղա-

---

46 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 32, գ. 2, թ. 19։

47 Հ. Ե. Թումանյան, Հայկական ՍՍՌ-ի էկոնոմիկան Հայրենական պատերազմի շրջանում և նրա զարգացումը հետպատերազմյան առաջին հնգամյակում, Երևան, 1953, էջ 26, «Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը 1920—1960», էջ 261 և այլն։

48 «Решения партии и правительства по хозяйственным вопросам», т. 3, М., 1968, с. 382.

49 Լեոնիդ Իլյիչ Բրեժնև, Խոպան, Երևան, 1978, էջ 43։

տնտեսության անշեղ զարգացման մասին»[50] դրույթը, հանգել է այն ճիշտ հետևության, որ «եթե ընդհուպ մինչև 1943 թ. գյուղատնտեսության մեջ իշխել է նվազման միտումը, ապա 1944 թ. սկսվեց որոշ վերելք ինչպես ազատագրված տարածքում, այնպես էլ թիկունքային շրջաններում»[51]։ Ի դեպ ՀՍՍՀ գյուղատնտեսության մեջ բարելավումը սկսվել է 1943 թ. (տե՛ս աղյուսակ № 3)։

Մեծ հայրենականի շրջանի Ադրբեջանական ՍՍՀ-ի գյուղատնտեսության մասին նույն տեսակետը տարիներ առաջ հիմնավորել է Գ. Մեխտիևը[52], իսկ Անդրկովկասի մասշտաբով նույն կարծիքը զարգացրել է Կ. Ցկիտիշվիլին։ Որպես պատասխան նրանց, ովքեր շարունակում են պաշտպանել պատերազմի շրջանում գյուղատնտեսության անշեղ զարգացման թեզը, վերջինս դիպուկ նկատել է, որ «ստեղծում են կեղծ պատկերացում այն մասին, որ պատերազմը հանդիսացել է գյուղատնտեսական արտադրանքի աճի յուրատեսակ խթան»[53]։

Հանրապետությունում գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է ինչպես 1941 թ., այնպես էլ 1942 թ. և միայն 1943 թ. է սկսվել որոշ տեղաշարժ դեպի բարելավում։ Հանրապետության պատերազմի շրջանի գյուղատնտեսության համախառն արտադրանքը նվազել է նաև նախորդ 5 տարվա համեմատությամբ։ Այսպես, եթե 1936—1940 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 520,5 մլն ռ., ապա 1941—1945 թթ.՝ չի անցել 500,7 մլն ռուբլուց[54]։

Այսպիսով, սխալ է սովետահայ պատմագիտության մեջ պաշտպանվող այն կարծիքը, որ, իբր պատերազմի շրջանում հանրապետության գյուղատնտեսությունն անշեղ վերելք է ապրել։ Պատերազմը ժամանակավորապես կասեցրեց ՍՍՀՄ, այդ թվում և ՀՍՍՀ գյուղատնտեսության զարգացումը, բայց կոլտնտեսային կարգը հնարավորություն տվեց հաղթահարել պատերազմի հետևանքով ստեղծված դժվարությունները, ապահովել գյուղատնտեսության սոցիալիստական եղանակի անշեղ ընթացքը, բավարարել բանակի և բնակչության կարիքները։ «Պատերազմի պայմաններում կոլտնտեսային կարգը ցույց տվեց իր կենսունակության մեծ ուժը,— ասված է ՀամԿ(բ)Կ Կենտկոմի՝ 1946 թ. փետրվարի 2-ին ընտրողներին ուղղած դիմումի մեջ։— Եթե պատերազմի ժամանակ մեզ մոտ կոլտնտեսություններ չլինեին, գյուղատնտեսությունը լրիվ անկում կապրեր և բանակն ու երկիրը կթողներ առանց մթերքների։ Միմիայն կոլտնտեսությունների շնորհիվ էր, որ մեր գյուղացիությունը պատվով կատարեց ռազմական ժամանակների խնդիրները»[55]։

---

50 Ю. В. Арутюнян, նշվ. աշխ., էջ 9։

51 Նույն տեղում, էջ 384։

52 Г. И. Мехтиев, Деятельность компартии Азербайджана в период Великой Отечественной войны 1941—1945 гг., Баку, 1967, с. 11—12.

53 К. В. Цкитишвили, Закавказье в годы Великой Отечественной войны, Тбилиси, 1969, с. 339.

54 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 120, ց. 5, գ. 62, թ. 13։

55 «Борьба КПСС за восстановление и развитие народного хозяйства в 1945—1953 гг.», М., 1961, с. 40.

СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО АРМЯНСКОЙ ССР В ГОДЫ ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ

ВАГАН ПОГОСЯН

Резюме

Под руководством Коммунистической партии колхозное крестьянство республики в годы Великой Отечественной войны проделало героическую работу по преодолению возникших в результате войны трудностей и решению поставленных партией задач.

В годы Великой Отечественной войны из республики более 100 тысяч крестьян ушли на фронт. Армии было дано около 20% тракторов из тракторного парка, 2/3 части автомашин, 50% всех имеющихся лошадей, прекратился ввоз запчастей сельскохозяйственных машин и минеральных удобрений из других регионов страны. Однако колхозный строй дал возможность трудящимся села преодолеть эти трудности и внести свой вклад в великую победу советского народа.